ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ՇՏԱԲ

375025, ք. Երևան, Նալբանդյան 130 հեռ. 59-65-94

N 2/2-1-2211 10.09.2014 թ.

ՀՀ ոստիկանության համակարգի ձերբակալվածներին պահելու վայրերում հասարակական դիտորդների խմբի նախագահ Հասմիկ Սահակյանին

Հարգելի տիկին Սահակյան

Ի լրումն 13.08.2014 թ. թիվ 2/2-1-1946 և 28.08.2014թ. թիվ 2/2-1-2065 գրությունների հայտնվում է, որ ՀՀ ոստիկանության համապատասխան ծառայությունների հետ քննարկվել է ՀՀ ոստիկանության համակարգում գործող ՁՊՎ-ներում պահվող անձանց օրական 3 անգամյա անվճար սննդով ապահովելու (ներառյալ մեկ տաք սնունդ) հարցը:

Հարկ է նշել, որ հիշյալ խնդիրները լիարժեք իրականացնելու համար, որոշ բաժինների (հիմնականում հեռավոր մարզերի) ենթակայության տակ գտնվող, ինչպես նաև սակավաթիվ ձերբակալվածներ և կալանավորվածներ պահվող ՁՊՎ-ներում, երբեմն դժվարություններ են առաջանում տնտեսվարող ընկերությունների հետ սննդի մատակարարման պայմանագրեր կնքելու գործում, ինչը պայմանավորված է վերջիններիս կողմից համապատասխան հնարավորություններ չունենալու և ոչ շահավետ լինելու հանգամանքներով: Նման դեպքերում ՀՀ ոստիկանությունը աշխատում է իր միջոցներով լուծել վերը նշված խնդիրը՝ ՁՊՎ-ներում պահվող անձանց ապահովելով անհրաժեշտ անվճար սննդով:

Գիտակցելով խնդրի կարևորությունը՝ ՀՀ ոստիկանության պետի կողմից հանձնարարական է տրվել համապատասխան ծառայություններին՝ միջոցներ ձեռնարկել ՁՊՎ-ներում պահվող անձանց անվճար սննդով ապահովելու համար նախատեսված գումարի չափը բարձրացնելու և ՀՀ կառավարության 05.06.2008 թ. թիվ 574-Ն որոշման պահանջները լիարժեք իրականացնելու համար (հարկ եղած դեպքում ՀՀ ոստիկանությունը կդիմի ՀՀ կառավարություն):

Ձեռնարկված միջոցառումների արդյունքների մասին Ձեզ կհայտնվի լրացուցիչ:

Ինչ վերաբերում է ՁՊՎ-ներում պահվող անձանց օրենսդրությամբ նախատեսված անվճար սննդով ապահովելու վերաբերյալ ոստիկանության կողմից ապացույցներ ներկայացնելուն, ապա ոստիկանությունն իր մեկնաբանություններում հիմնվում է ոստիկանության բաժինների և տնտեսվարող ընկերությունների միջև կնքված պայմանագրերի, ֆինանսական փաստաթղթերի և օրվա կարգացուցակով նախատեսված սննդացանկի վրա:

ՁՊՎ-ներում պահվող անձանց անհրաժեշտ սննդով ապահովելու կարգը խախտելու վերաբերյալ փաստեր ներկայացնելը, կարծում ենք, դիտորդների խմբի առաքելությունն է, որը պետք է արտացոլվի այցելությունների արդյունքում արձանագրված և ՀՀ ոստիկանություն ներկայացված հաշվետվություններում՝ նշելով կոնկրետ փաստեր:

Ներկայացված փաստերի հիման վրա ՀՀ ոստիկանության կողմից կիրականացվեն ստուգումներ, անհրաժեշտության դեպքում կկատարվեն ծառայողական քննություններ և իրենց գործառութային պարտականությունների մեջ թերացած ծառայողները կենթարկվեն կարգապահական պատասխանատվության՝ ինչը կնպաստի ՁՊՎ-ներում պահվող անձանց իրավունքների պահպանմանը, ինչպես նաև դիտորդների խմբի ու ՀՀ ոստիկանության արդյունավետ համագործակցությանը:

ՀՀ ոստիկանության շտաբ